



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

30 նոյեմբերի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/3

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 43 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Հրաչյա Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սերգեյ Ներսեսյանը, Գայանե Մելքոմ Մելքոմյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Դավիթ Համբարյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Դավիթ Ճգնավորյանը, Հայկ Պողոսյանը, Կամո Արեյանը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը, իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Հ.Սարգսյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2021 թվականի դեկտեմբերի 21-ին, ժամը 11.00-ին:

Առաջարկն ընդունվեց:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Հ.Սարգսյանը հայտնեց, որ օրակարգի նախագծի 8-րդ հարցը՝ ««Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին» և 9-րդ հարցը՝ ««Երևանի

Կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին» ավագանու որոշումների նախագծերը, նախագծերի հեղինակներ, ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամներ՝ Արմեն Գալջանի, Լևոն Հովհաննիսյանի և Արման Անտոնյանի կողմից հանվում են քննարկումից:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Հ.Սարգսյանը տեղեկացրեց, որ լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտությունից ելնելով՝ 2021 թվականի նոյեմբերի 30-ի նիստի օրակարգի նախագծի 15-րդ հարցը՝ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և 16-րդ հարցը՝ «Գույքը որպես նվիրաբերություն և նվիրատվություն ընդունելու մասին» ավագանու որոշումների նախագծերը հանում է քննարկումից:

Հ. Սարգսյանն առաջարկեց 2021 թվականի նոյեմբերի 30-ի նիստի օրակարգի նախագծի 12-րդ հարցը՝ «Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» որոշման նախագիծը քննարկել՝ որպես օրակարգի նախագծի 4-րդ հարց:

Առաջարկն ընդունվեց:

Օրակարգի նախագծի վերաբերյալ արտահերթ ելույթներով հանդես եկան Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջանը, ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը, ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Հ. Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 30-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկված տոկոսների Երևանի բյուջե վճարումից ազատելու մասին:

3. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4. Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

5. Երվանդ Ղազանջյանի և Գալյա Նովենցի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

6. Վիլեն Գալստյանի և Նադեժդա Դավթյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

7. Կարապետ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

8. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

9. Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

10. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

11. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

12. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. ԼՍԵՑԻՆ - Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկված տոկոսների Երևանի բյուջե վճարումից ազատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկված տոկոսների Երևանի բյուջե վճարումից ազատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Լիլիթ Կիրակոսյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Դավիթ Խաժակյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2018 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից հաշվարկված Երևանի բյուջե շահութաբաժնի՝ 12007.3 հազ.դրամի (տասերկու միլիոն յոթ հազար երեք հարյուր դրամ), ինչպես նաև սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկված տոկոսների՝ 825.05 հազ.դրամի (ութ հարյուր քսանհինգ հազար հիսուն դրամ) վճարումից՝ ընդամենը 12832.35 հազ.դրամի (տասերկու միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր հիսուն դրամ) չափով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արման Անտոնյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 310-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. ԼՍԵՑԻՆ - Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Դավիթ Խաժակյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Ա. Վարդանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

2. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Արման Անտոնյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայկական հեռուստատեսության հիմնադրման 65 և ծննդյան 85-ամյակների առթիվ, հեռուստատեսության և ռադիոյի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, արվեստի, գիտության և կրթության ոլորտում ունեցած հաջողությունների համար արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39 , դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. ԼՍԵՑԻՆ - Երվանդ Ղազանչյանի և Գալյա Նովենցի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Ա. Վարդանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երվանդ Ղազանչյանի և Գալյա Նովենցի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանի և ՀՀ ժողովրդական արտիստ, դերասանուհի Գալյա Նովենցի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի շենքի (Վ.Սարգսյան փողոց հ.7) ճակատային մասում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. ԼՍԵՑԻՆ - Վիլեն Գալստյանի և Նադեժդա Դավթյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Վիլեն Գալստյանի և Նադեժդա Դավթյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Միքայել Մանրիկյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ ժողովրդական արտիստներ, պարուսույցներ Վիլեն Գալստյանի և Նադեժդա Դավթյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Ա.Թամանյան փողոց հ.3 հասցեում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. ԼՍԵՑԻՆ - Կարապետ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ– Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Կարապետ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն ՀՀ վաստակավոր նկարիչ Կարապետ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կ.Ունեցու փողոց հ.30^ա հասցեում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

8. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածի 21-րդ կետի երրորդ պարբերությունում «տասն» բառը փոխարինել «հինգ» բառով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

9. ԼՍԵՑԻՆ - Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Պավել Սարգսյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Պայմանագրի գործողության

ժամկետը երկարաձգելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Հ. Ավետիսյան փողոցի հ.5/4 հասցեում գտնվող «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրված 933.52քմ մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.04.2009թ. հ.2470805 վկայական/ տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) տարի ժամկետով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 40 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

10. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Հ. Հովսեփյան փողոցի հ.31;31/2 հասցեում գտնվող «Սահակյանշին» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.05575հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 40 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 8

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

11. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սեդոյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի

քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
	Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	2	561,000		1,122,000
3	գլխավոր մասնագետ	4	323,000		1,292,000
4	գործավար	1	248,200		248,200
-	Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային առաջին բաժին				
5	բաժնի պետ	1	408,000		408,000
6	գլխավոր մասնագետ	4	289,000		1,156,000
7	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
8	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային երկրորդ բաժին				
9	բաժնի պետ	1	408,000		408,000
10	գլխավոր մասնագետ	4	289,000		1,156,000
11	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
12	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000

-	Կարգավիճակ չունեցող գույքերի բաժին				
13	բաժնի պետ	1	408,000		408,000
14	գլխավոր մասնագետ	4	289,000		1,156,000
15	առաջատար մասնագետ	5	282,200		1,411,000
16	առաջին կարգի մասնագետ	5	272,000		1,360,000
-	Համակարգման և տեղեկատվության ապահովման բաժին				
17	բաժնի պետ	1	408,000		408,000
18	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
19	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
20	առաջին կարգի մասնագետ	4	272,000		1,088,000
-	Ինժեներական ենթակառուցվածքների բաժին				
21	բաժնի պետ	1	408,000		408,000
22	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
23	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
24	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Հողօգտագործման և հողհատկացման տարածքային առաջին բաժին				
25	բաժնի պետ	1	408,000		408,000
26	գլխավոր մասնագետ	4	289,000		1,156,000
27	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
28	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Հողօգտագործման և հողհատկացման տարածքային երկրորդ բաժին				
25	բաժնի պետ	1	408,000		408,000
26	գլխավոր մասնագետ	4	289,000		1,156,000
27	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
28	առաջին կարգի	1	272,000		272,000

	մասնագետ				
	ԸՆԴԱՄԵՆԸ	69			21,474,400

2) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
	Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին				
1	բաժնի պետ	1	442,000		442,000
2	բաժնի պետի տեղակալ	1	326,400		326,400
3	գլխավոր մասնագետ	12	289,000		3,468,000
4	առաջատար մասնագետ	5	282,200		1,411,000
5	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
6	գործավար	1	248,200		248,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	21			6,167,600

3) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «631.5» և «213794500» թվերը փոխարինել համապատասխանաբար «657.5» և «221529500» թվերով.

4) «Ամբողջը» տողում «1995.5» և «603090900» թվերը փոխարինել համապատասխանաբար «2021.5» և «610825900» թվերով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

12. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցող հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Տիգրան Գալստյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տ. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ուժը կորցրած ճանաչել որոշման N 1 հավելվածի «II Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններ» գլուխը.

2) որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Գործերի կառավարման և սպասարկման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Գործերի կառավարման և սպասարկման վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	գլխավոր մասնագետ	1	323,000		323,000
3	առաջատար մասնագետ	3	289,000		867,000
4	խմբակցության փորձագետ	5	306,000		1,530,000
-	Ընդհանուր բաժին				
5	բաժնի պետ	1	408,000		408,000
6	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
7	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
8	առաջին կարգի մասնագետ	3	272,000		816,000
-	Քաղաքացիների սպասարկման բաժին				
9	բաժնի պետ	1	408,000		408,000
10	գլխավոր մասնագետ	7	289,000		2,023,000
11	առաջատար մասնագետ	9	282,200		2,539,800
12	առաջին կարգի մասնագետ	10	272,000		2,720,000
13	քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկման կենտրոնի առաջին կարգի մասնագետ	17	132,300		2,249,100
-	Մատակարարման և տեխնիկական սպասարկման բաժին				
14	բաժնի պետ	1	408,000		408,000
15	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
16	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
17	երկրորդ կարգի մասնագետ	1	258,400		258,400
18	գործավար	10	248,200		2,482,000

19	պատճենահանող	1	214,200		214,200
20	վարորդ	1	289,000		289,000
21	վարորդ	8	272,000		2,176,000
22	վարորդ	34	255,000		8,670,000
23	տեխնիկական սպասարկող	1	255,000		255,000
24	բանվոր	2	255,000		510,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	124			31,846,100

»

բ. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «657.5» և «221,529,500» թվերը փոխարինել համապատասխանաբար «674.5» և «223,778,600» թվերով.

գ. ուժը կորցրած ճանաչել «ԼԼ. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններ» գլուխը.

դ. «ԼԼ. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1364» և «389,296,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «1324» և «382,874,000» թվերով.

ե. «Ամբողջը» տողում «2021.5» և «610,825,900» թվերը փոխարինել համապատասխանաբար «1998.5» և «606,652,600» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ